



---

**ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ**  
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության  
ամբիոնի դոցենտ,  
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

**«ՏԱՓԱՐԱԿ ԱՇԽԱՐՀԻ»  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳՐ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ  
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՈՂ<sup>1</sup>**

Այսօր ամենաշատ քննարկվող թեմաներից մեկը համաշխարհայնացման (գլոբալիզացիա) հիմնախնդիրն է՝ որպես համաշխարհային տնտեսության, քաղաքականության և մշակույթի միասնացման գործընթաց և, այդ համատեքստում, ազգային անվտանգության ապահովման հարցը: Ժամանակակից տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների աննախադեպ առաջընթացի շնորհիվ երբեմնի «մեծ» աշխարհը փոքրացել, դարձել է «պատիկ» և վեր է ածվել «հարթ խաղաղաշտի»: Աշխարհը դարձել է «տափարակ», այսինքն՝ համաշխարհայնացման շնորհիվ վերացել են ոչ միայն աշխարհագրական խոչընդոտները, այլև տարբեր պետությունների և ազգային մշակույթների բաժանարար սահմանները: Նման պայմաններում մեծացել է ոչ միայն ազգային տնտեսության, այլև ազգային մշակույթի, նույնիսկ պետության ինքնիշխանության կորստի վտանգը: Հոդվածում քննարկվում է այն հարցը, թե ինչպես կարելի է հաղթահարել այդ սպառնալիքները և ապահովել մշակութային ու ազգային անվտանգություն:

**Հիմնաբառեր.** տափարակ աշխարհ, համաշխարհայնացում, միգրացիա, միասնացում, մուլտիկուլտուրիզմ, երկրի խարտիա, մշակույթների երկխոսություն, աշխարհի քաղաքացի, զանգվածային մշակույթ, դիմակայություն

Այսօր ամենաշատ քննարկվող թեմաներից մեկը համաշխարհայնացման հիմնախնդիրն է՝ որպես համաշխարհային տնտեսության, քաղաքականության և մշակույթի միասնացման<sup>2</sup> գործընթաց, որի հիմնական և բնորոշ գծերն

---

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է «Ամբերդ» գիտահետազոտական ծրագրի շրջանակներում:  
<sup>2</sup> 20-րդ դարի 80-ական թվականներին շրջանառության մեջ մտավ «մշակույթի համաշխարհայնացում» հասկացությունը:

են աշխատանքի համաշխարհային բաժանումը, փողային, մարդկային և արդյունաբերական ռեսուրսների միգրացիան երկրագնդի մասշտաբով, ինչպես նաև տնտեսական և տեխնոլոգիական գործընթացների միօրինակացումն ու տարբեր երկրների և ժողովուրդների մշակույթների մերձեցումը, և այդ համատեքստում՝ ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրը: Համաշխարհայնացման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ձևավորվել են տարբեր տեսակետներ: Որոշ հետազոտողներ համաշխարհայնացումը համարում են «զծային» գործընթաց՝ դրա սկիզբը համարելով Ա. Մակեդոնացու հսկայածավալ պետության և Հռոմեական կայսրության ստեղծումը, քրիստոնեության տարածումը և այլն: Գուցե համաշխարհայնացման նման մեկնաբանությունը, որոշ առումով, չի համապատասխանում երևույթի ժամանակակից ըմբռնումներին, թեկուզ և այն իմաստով, որ այդ շրջանում հնարավոր չէ խոսել աշխատանքի հասարակական բաժանման, տնտեսության միասնացման կամ մարդկային և արդյունաբերական ռեսուրսների միգրացիայի մասին այնպես, ընկալում են հիմա: Այնուամենայնիվ, առկա է համաշխարհայնացման մեկ այլ կարևոր գործոն՝ քաղաքական և մշակութային միասնացումը: Ընդ որում, հատկապես ընդգծված է մշակութային միասնացումը, երբ արևմտյան և արևելյան մշակույթների համադրության արդյունքում ձևավորվեց միանգամայն նոր՝ հելլենիզմի մշակույթը, որը որոշիչ ազդեցություն ունեցավ ամբողջ մշակույթի հետագա զարգացման վրա:

Այս հայեցակարգի մշակողներից մեկը XX դարի նշանավոր մտածող Թոմաս Ֆրիդմանն է: Ընդունելով հանդերձ, որ համաշխարհայնացման գործընթացն ունի «զծային» բնույթ, այնուամենայնիվ, նրա կարծիքով, որպես իրական գործընթացի սկիզբ պետք է դիտարկել ոչ թե Ա. Մակեդոնացու հսկայածավալ կայսրության ստեղծումը կամ քրիստոնեության տարածումը, այլ Քրիստափոր Կոլումբոսի առաջին արշավանքը: Ըստ այդմ՝ համաշխարհայնացման առաջին շրջանը սկսվում է 1492 թվականից՝ հասնելով մինչև 1800-ական թվականները: Կոլումբոսն իր արշավանքով ապացուցեց, որ աշխարհն այնքան էլ մեծ չէ, ինչպես թվում էր: Շնորհիվ նրա հայտնագործության՝ «մեծ» աշխարհը փոքրանում է, դառնում «միջին» չափերի: Ճիշտ է, այս շրջանի հիմնական մրցակից դերակատարները ռեսուրսների և շուկաների համար պայքարող պետություններն են, սակայն, այս շրջանում էապես փոխվում է մշակույթների փոխհարաբերության բնույթը: Եվրոպական պետությունները, գաղութացնելով Ամերիկայի, Աֆրիկայի և Արևելյան Ասիայի ժողովուրդներին, հիմնականում ոչնչացնում էին նրանց լեզուն, մշակույթը, ավելին՝ տեղաբնիկներին նայում էին որպես «ոչ մարդկանց»: Ֆրանց Ֆենոնն այս առնչությամբ գրում է, որ գաղութարարները տեղաբնիկներին համարում էին «չարիք»: Նրանց բնութագրմամբ՝ տեղաբնիկների մեջ ապրում է «ավերող սկիզբը», որն ավերում է ամեն ինչ իր շրջապատում և մի առանձնակի հաճույքով այլանդակում այն ամենը, ինչը կապված է բարոյականության և գեղեցիկի հետ: Տեղաբնիկը հանցագործ էներգիայի զետեղարանն է, անգիտակցական և անուղղելի կույր ուժերի գործիք, ուստի նա մարդ չէ, կենդանի է, և նրա հետ կարելի է վարվել այնպես, ինչպես կենդանու հետ են վարվում: Պատահական չէ, որ գաղութարարները նրանց բնութագրելիս զուգահեռներ էին անցկացնում կենդանիների հետ, այսպես՝ «օձային շարժումներ», «բնակարանների գարշահոտություն», «նապաստակների նման բազմանալու ընդունակություն», և այլն<sup>3</sup>: Երևույթը կարող էր քննարկման նյութ չդառնալ,

<sup>3</sup> Տե՛ս **Fanon F.**, *The Wretched of the Earth*. Baltimor, 1973, էջ 33 – 39:

Եթե գաղութարարների վերաբերմունքը բնիկների մեջ կասկած չառաջացնելու համար նարդկային հատկանիշների հանդեպ: Ցավալին այն է, որ տեղաբնիկն սկսում էր իրեն գնահատել վերաբնակների աչքերով: Բնականաբար, նման պայմաններում անհնարին է դառնում տեղաբնիկների բնականոն զարգացումը, առավել ևս՝ չի կարող զարգանալ նրանց մշակույթը: Շարունակելով իր միտքը՝ Ֆենոնը գրում է, որ տեղացի մտավորականը, արիստոկրատը, բարձրաշխարհիկը յուրացնում-սեփականում է գաղութարարների մշակութային արժեհամակարգը, լեզուն, սովորույթները, ավանդույթները, ապրելակերպը... Ժամանակի ընթացքում գաղութարարների մշակույթն ու ապրելակերպը այնպես են թափանցում տեղաբնիկների ենթագիտակցության մեջ, որ գաղութարարի արժեհամակարգը դառնում է նրանը, որի հետևանքով սևամորթ տեղացին դառնում է հակասևամորթ (anti negro): Եվ քանի որ եվրոպացու խմբային գիտակցության մեջ սև գույնը նույնանում է անբարո մղունների, մեղքի, չարիքի, ցեխի, այլանդակի, աղքատության, մահվան, սատանայի հետ (սպիտակ ռասայի աստվածները սպիտակ են, սատանաները՝ սև), տեղաբնիկների համար նույնպես սև գույնը դառնում է տհաճ, ատելի և անընդունելի, զգվանք առաջացնող... Այս հարցի մասին այսքան չէինք խոսի, եթե խնդիրն առկա չլիներ նաև մեզանում և «տափարակ աշխարհի» պայմաններում չդառնար ավելի սպառնալի... Հարյուրամյակներ շարունակ ապրելով արաբների ու թուրքերի տիրապետության տակ՝ մենք մեր մասին մտածում էինք զրեթե այնպես, ինչպես մեզ բնութագրում էին նրանք... Ընդ որում, դա առկա էր նաև ռուսահպատակ հայության շրջանում, որի մասին հաճախակի էր խոսում XIX դարի մեր խոշոր մտածողներից մեկը՝ Գր. Արծրունին: Հայը ամաչում էր իր հայ լինելուց, թաքցնում էր դա, իր սովորույթներն ու ավանդույթները համարում էր անարժեք, տգեղ, անբարո. երբ երկու հայ հանդիպում էին, աշխատում էին հայերեն չխոսել, իսկ հայերեն խոսելիս անընդհատ նայում էին իրենց շուրջը, թե հանկարծ որևէ մեկը չլսի իրենց: Փոխարենը ընդօրինակում էր տիրապետող ժողովրդի լեզուն, մշակույթը, սովորույթները, ավանդույթները, կենցաղը, դառնում էր թուրքալեզու և թուրքակենցաղ, ռուսալեզու և ռուսակենցաղ... և, որպես այդպիսին, ատում էր այն ամենը, ինչը հիշեցնում էր հայկականը... 1877 թ. Արծրունին գրում էր. «Հայը միշտ ամաչում է հայ անուանվել... Ամենամեծ գովասանքը որ կարող է անել թիֆլիսեցի հայ կինը խոսելով մի աղջկա վրա, հետևյալն է. «հետտի շնուրքով աղջիկ է, կոսիս վրացի ըլի...»»:

Համաշխարհայնացման երկրորդ շրջանն ընդգրկում է 1800-ականներից մինչև 2000 թվականն ընկած ժամանակահատվածը, որը, ըստ Ֆրիդմանի, մի պահ ընդհատվեց երկու համաշխարհային պատերազմների և Մեծ ճգնաժամի հետևանքով: Համաշխարհայնացման այս շրջանում աշխարհն ավելի փոքրացավ և «միջինից» վերածվեց «փոքրի»՝ պայմանավորված շոգենավերի և երկաթուղային ցանցի ստեղծմամբ, որի շնորհիվ նվազեց բեռների տեղափոխման արժեքը, կրճատվեց փոխադրման ժամանակը: Եթե իսպանական Պալոս նավահանգստից մինչև Սան Ստեֆանո կղզի հասնելու համար Կոլումբոսից պահանջվեց զրեթե երկուսուկես ամիս՝ 1492 թ. օգոստոսի 3-ից մինչև հոկտեմբերի 12-ը, ապա այժմ այդ տարածությունն անցնելու համար պահանջվում է անհամեմատ քիչ ժամանակ: Այս շրջանում մեծանում է նաև վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) դերակատարությունը: Համաշխարհայնացման գործընթացին զուգահեռ զարթոնք են ապրում ազգերը, վերածնվում են ազգային մշակույթները, վերելք է ապրում ազգային-ազա-

տագրական պայքարը և մեծանում է ազգային պետությունների ստեղծման ծագումը:

Այս գործոններն առկա էին նաև XX դարում, սակայն, հեռախոսի և հեռագրի հայտնագործումով պայմանավորված, դրանց ավելացավ նաև էժան տեղեկատվությունը, որին հետագայում փոխարինելու եկան էլեկտրոնային հաղորդակցման տեխնոլոգիաները, արբանյակային կապը և այլն: XX դարի երկրորդ կեսից ականատեսը դարձանք համաշխարհային տնտեսության վերածննդի, որտեղ առանցքային դերակատարներն էին ոչ թե պետությունները, այլ վերագրային կորպորացիաները, որոնք էլ գործնականում որոշում էին խաղի կանոնները և հետևում դրանց կատարմանը: Համաշխարհայնացման ժամանակակից շրջանը Ֆրիդմանը համարում է երրորդը, որի սկիզբը 2000 թվականն է նշվում: Այս շրջանում աշխարհն ավելի է փոքրացել, դարձել է «պստիկ» (кросотный)՝ վերածվելով «հարթ խաղադաշտի»: Աշխարհը դարձել է «տափարակ», այսինքն՝ վերացել են ոչ միայն աշխարհագրական խոչընդոտները՝ ծովերն ու օվկիանոսները, լեռներն ու ձորերը, այլև տարբեր պետությունների և ազգային մշակույթների բաժանարար սահմանները: Նպաստավոր պայմաններ են ստեղծվել ինչպես պետությունների, այնպես էլ ազգային մշակույթների փոխշփման համար, երբ տարբեր ժողովուրդների և մշակույթների գոյությունը դարձել է հնարավոր, քանի որ որպես իմպերատիվ (կտրական պահանջ) է ընդունվում մշակութային պլուրալիզմը՝ ի դեմս մուլտիկուլտուրիզմի<sup>4</sup>, նաև դարձել են ավելի խոցելի արտաքին ազդեցությունների իմաստով: Եվ դա շնորհիվ գիտատեխնիկական առաջընթացի և հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման, որի հետևանքով արևմտյան մշակույթը լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում, դարձել տիրապետող, շատ անգամ հենց ազգային մշակույթների հաշվին<sup>5</sup>: Տիրապետող է դարձել նաև արևմտյան քաղաքական մշակույթը՝ ի դեմս լիբերալ-ժողովրդավարական կառավարման համակարգի, որը Ֆրենսիս Ֆուկույամային հիմք տվեց հայտարարելու «պատմության վերջի» մասին, իհարկե, խոսքը չի վերաբերում «պատմությանը՝ որպես իրադարձությունների հաջորդափոխություն», ինչպես դա Հեգելն էր հասկանում, այլ որպես լիբերալ ժողովրդավարության օրինականացում, որը կարող է դառնալ «մարդկության գաղափարական էվոլյուցիայի վերջին կանգառը»՝ «մրցակցող գաղափարախոսությունների պարտությանը զուգընթաց»<sup>6</sup>: Պատահական չէ, որ այս շրջանում սրվում են ոչ միայն ազգային-պետական, այլև հոգևոր-բարոյական անվտանգության ապահովման և ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները:

Հետազոտողների մեկ այլ խումբ ընդգծում է երևույթի փուլային բնույթը՝ նկատի ունենալով դրա պարբերական կրկնությունները, երբ խորանում և սերտանում են տարբեր երկրների ու ժողովուրդների փոխադարձ կապերն ու կախվածությունը: Այս հայեցակարգի նշանավոր ներկայացուցիչներից է ռուս քաղաքագետ Վլադիմիր Պանտինը, որի կարծիքով՝ համաշխարհային

<sup>4</sup> Մուլտիկուլտուրիզմը գաղափարախոսություն, նաև քաղաքականություն է՝ նպատակաուղղված առանձին որևէ երկրում կամ ամբողջ աշխարհում էթնիկական կամ մշակութային խմբերի մշակութային տարբերությունների պահպանմանն ու զարգացմանը: Դա ուղղված է «հալոցքային կաթսայի» (անգլ. melting pot) գաղափարախոսության և քաղաքականության դեմ, որը ենթադրում է բոլոր մշակույթների ծուլում մեկ ընդհանուր մշակույթի մեջ: Մուլտիկուլտուրիզմն արդեն իսկ ճգնաժամ է արձանագրել, որն ընդունում են արևմտյան երկրների մեծ մասում:

<sup>5</sup> Տե՛ս **Փրիդման Դ.**, Плоский мир: Краткая история XXI века, ч. 1. М.: Хранители, 2003:

<sup>6</sup> **Ֆ. Ֆուկույամա**, Լիբերալիզմի այլընտրանքները, Եր., «Զանգակ-97», 2007, էջ 58:

տնտեսությունը զարգանում է Ն. Կոնդրատևի նախանշած փուլերին համապատասխան (40–60 տարի ընդգրկող պարբերական փուլերով): Հիմք ընդունելով վերջինիս մեթոդաբանությունը՝ 2004 թվականին նա կանխատեսեց 2008 թ. տնտեսական ճգնաժամը<sup>7</sup>: Երրորդ խումբը համոզված է, որ համաշխարհայնացումը ինքնաբերական գործընթաց է՝ վերջին տասնամյակների գիտատեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական աննախադեպ առաջընթացի արդյունք: Այս մոտեցման կողմնակիցները կարևորում են միջազգային առևտրի և ներդրումային հոսքերի ծավալների աճը, համաշխարհային տեղեկատվական տարածության ձևավորման, տնտեսությունների բացության, վերազգային կորպորացիաների և համաշխարհային բնույթ ունեցող այլ ինստիտուտների ստեղծման դերը:

Անկախ այն հանգամանքից, թե հետազոտողները որ հայեցակարգին են հետևում, բոլորն էլ ժամանակակից տնտեսության և մշակույթի համաշխարհայնացման հիմքում տեսնում են օբյեկտիվ նույն գործոնները: Ֆրիդմանի կարծիքով՝ ժամանակակից իրավիճակի յուրահատկությունն այն է, որ համաշխարհայնացման գլխավոր դերակատարներն այսօր ոչ թե պետություններն ու կորպորացիաներն են, ինչպես նախկինում էր, այլ առանձին մարդիկ և փոքր կոլեկտիվները: Նրանք, որպես մրցակից գործընկերներ, կարող են տնտեսական մրցակցության մեջ մտնել բոլոր երկրներում և մայրցամաքներում՝ ստեղծելով նոր ընկերություններ կամ ձևափոխելով գոյություն ունեցողները: Համացանցը և ժամանակակից տեղեկատվական մյուս տեխնոլոգիաները հնարավոր են դարձրել աշխատանքների այնպիսի կոոպերացիա, որը գործնականում ակնթարթորեն գործադրվում է ամբողջ աշխարհում: Փաստորեն, ամբողջ մոլորակը վերածվել է արտադրական ընդհանուր դաշտի, որտեղ գործում են միասնական աշխատանքային կանոններ և նորմեր, որն էլ «տափարակ աշխարհի» հայեցակարգային իմաստն է: Իհարկե, Ֆրիդմանը ընդունում է բազմաթիվ խոչընդոտների և արգելքների գոյությունը համաշխարհայնացման և «տափարակ աշխարհի» կայացման ճանապարհին՝ հատկապես ընդգծելով մոլորակի ազգաբնակչության մի մասի աղետալի աղքատությունը, ինչպես նաև միլիոնավոր այն մարդկանց, ովքեր ապրում են «տափարակ աշխարհի» սահմանագծին, զգում են դրա ազդեցությունը, սակայն չեն կարողանում օգտվել բարիքներից: Որպես հիմնական խոչընդոտ նա առանձնացնում է նաև երրորդ աշխարհի համաշխարհայնացման հետևանքով այդ երկրներում սրվող սոցիալական շերտավորումը, որից մեծանում է գործազուրկների թիվը, որն էլ, իր հերթին, առաջ է բերում ճնշվածության և թերաբժեքության զգացում՝ խթանելով ազգայնական շարժումները և թշնամանքի ու ատելության զգացումները զարգացած երկրների և դրանց մշակույթների նկատմամբ:

Համաշխարհայնացումը, ինքնին վերցրած, ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական երևույթ է, թեև, շատ առումներով, ավելի դրական գործընթաց է, եթե նկատի ունենանք, որ դա շուկաների, պետություն-ազգերի և տեխնոլոգիաների միասնացում է, որը անհատին, կորպորացիաներին և ազգ-պետություններին հնարավորություն է տալիս հասնելու աշխարհի ցանկացած կետ՝ ավելի արագ և էժան... Համաշխարհայնացումն օբյեկտիվ գործընթաց է՝ պայմա-

<sup>7</sup> Տե՛ս **Փանտին Վ.**, Циклы и волны глобальной истории. Глобализация в историческом измерении. М.: Новый век, 2003, **Փանտին Վ., Лапкин В.**, Геоэкономическая политика и глобальная политическая история. М.: Олита, 2004:

նավորված մի շարք գործոններով. գիտատեխնիկական աննախադեպ առաջընթաց, հաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում, լիբերալ-ժողովրդավարական արժեքների տարածում և այլն: Դրա գլխավոր գաղափարն այն է, որ մարդկության առջև ծառայած բազմաթիվ հիմնախնդիրներ հնարավոր չէ գնահատել, ուսումնասիրել, առավել ևս համարժեք ձևով լուծել ազգային պետության շրջանակներում, առանձին երկրի մակարդակով. անհրաժեշտ է համաշխարհային հանրային աջակցությունը: Այս տեսանկյունից, անկասկած, անհրաժեշտություն է այդ գործընթացներում ներգրավվելը, մանավանդ որ հնարավոր չէ խուսափել դրա ազդեցությունից: Հետևաբար, հարկ է գիտակցաբար միանալ՝ պատմության ընթացքից դուրս չմնալու համար: Այլ խնդիր է, որ դրա արդյունքները կարելի է օգտագործել ինչպես ի շահ մարդկության, եթե ապահովում ենք մշակութային տարբերությունների հանդեպ հարգանք և հանդուրժողականություն, այնպես էլ ի վնաս մարդկության, եթե անտեսում ենք այդ հանգամանքները: Պատահական չէ, որ նույնիսկ նրանք, ովքեր ինտեգրումն ու համաշխարհայնացումը անխուսափելի են համարում, խուսափում են դրանց հետևանքների միանշանակ արժևորումից: Նոբելյան մրցանակի դափնեկիր, ամերիկացի տնտեսագետ Ջոզեֆ Ստիգլիցը համոզված է. «Եթե համաշխարհայնացումը հետագայում նույնպես իրականացվի նույն ձևով, ինչպես իրականացվել է մինչև հիմա..., ապա դա ոչ միայն չի կարող օժանդակել հասարակության զարգացմանը, այլև հետագայում նույնպես աղքատություն և անկայունություն է սփռելու»<sup>8</sup>:

Այս հանգամանքով է պայմանավորված նաև ազգայնական գաղափարախոսությունների և շարժումների ակտիվացումը՝ որպես ինքնատիպ հակաազդեցություն համաշխարհայնացման հնարավոր սպառնալիքներին՝ ի պաշտպանություն ազգային տնտեսության, ազգային մշակույթի ինքնատիպության, ազգային լեզվի, ազգային եկեղեցու, ազգային պետության պահպանության: Դրանով է պայմանավորված նաև հակահամաշխարհայնացման շարժումների ակտիվացումը: Ակադեմիկոս Ս. Սարինյանը մի առիթով նկատել է. «Այն, ինչ կոչվում է գլոբալիզացիա, համաշխարհային հրեշ է, որով աշխարհի ուժեղները ծգտում են խժռել փոքր ազգություններին ու էթնիկական կազմավորումները, ստեղծել գորշ, միագույն, միասեռ, միակենտրոն ունիվերսալիա: Հոգևոր ազդեցիկ, որ քաղաքական ազդեցիկի նախերգանքն է, գործում է բոլոր ուղղություններով՝ լեզու, կրոն, եկեղեցի, մշակույթ, սոցիալական կենցաղվարություն և այլն: Տրոհել, կազմալուծել, ձևախեղել ազգային միավորները, ստեղծել անազգ պետություն կամ անպետություն ազգ»<sup>9</sup>: Անկասկած, հարգարժան ակադեմիկոսի մտահոգությունը հիմնավոր է, սակայն, կարծում ենք, չի կարելի մերժողական վերաբերմունք դրսևորել մի երևույթի հանդեպ, որը օբյեկտիվ զարգացումների արդյունք է, որի դեմ պայքարելն առնվազն դոնքիշտություն է, նաև այն պատճառով, որ համաշխարհայնացումն ու միասնացումը բազմաթիվ դրական կողմեր ունեն, որոնցից, բնական է, ճիշտ չէ հրաժարվելը: Շահում են այն ազգերն ու ժողովուրդները, որոնք կարողանում են քայլել ժամանակի ոգուն համահունչ: Իսկ դա նշանակում է ընդօրինակել դրականը, առողջը, որ կա նոր մշակույթի, առա-

<sup>8</sup> **Տիգլից Ժ.**, Глобализация: тревожные тенденции (пер. с англ. Пирогова Г.). М.: Национальный общественно-научный фонд, 2003. <http://lib.rus.ec/b/362010/read>

<sup>9</sup> **Ս Սարինյան**, «Առաքյալ», 10 նոյեմբերի, 2004 թ.:

ջարկվող նոր արժեհամակարգի մեջ, միաժամանակ հրաժարվել ազգային-ավանդական այն արժեքներից, որոնք ժամանակավրեպ են և չեն կարող նպաստել ազգի հոգևոր և նյութական առաջընթացին: Այս տեսակետից՝ Ֆուկույաման համեմատում է Ճապոնիան և իսլամական երկրները. «Ի տարբերություն Մեյձիի ռեֆորմների, որը օգտվեց արևմտյան տեխնոլոգիաներից՝ Ռուսաստանին 1905-ին հաղթելու և 1941-ին Ամերիկայի վրա հարձակվելու համար, գրեթե բոլոր իսլամական երկրները այդպես էլ չյուրացրին Արևմուտքից ներմուծված գաղափարները և չհասան տնտեսական կամ քաղաքական այնպիսի հաջողության, որին մտադրվել էին հասնել տասնիններորդ դարավերջի ու քսաներորդ դարասկզբի բարեփոխիչները»<sup>10</sup>: Արդյունքում, ինչպես նկատում է Ֆուկույաման, այդ երկրներում «չհաջողվեց պահպանել ավանդական հասարակական կառուցվածքի ժառանգականությունը, հաջողությամբ ներդնել Արևմուտքի տեխնիկական և արժեքները», և այդ կրկնակի անհաջողությունից «խորը վիրավորված իսլամական հասարակության արժանապատվությունը» ծնունդ տվեց իսլամական վերածննդին<sup>11</sup>: Դա նշանակում է, որ չի կարելի նստել ձեռքերը ծալած և սպասել զարգացումների բնական ընթացքին: Փիլիսոփայության մեջ կա մի դրույթ՝ «անիմաստ շարժումն ավելի լավ է, քան իմաստավորված անշարժությունը»: Սակայն դա կոչ չէ անիմաստ գործողությունների, ընդհակառակը, հարկ է գործել իմաստավորված, նպատակասլաց, ամենայն պատասխանատվությամբ, համաշխարհայնացման և միասնացման օրինաչափությունների, պահանջների, մարտահրավերների իմացությամբ, որպեսզի կարողանանք առավելագույնս օգտվել դրա արդյունքներից: Այդպես են վարվել ասիական այն երկրները, որոնք տնտեսական հրաշք արձանագրեցին XX դարում: Այդ հաջողության համար ասիական երկրները, ինչպես նշում է Ֆուկույաման, պարտական են ոչ միայն սոսկ արևմտյան փորձի յուրացմանը, այլև այն բանին, որ կարողացան պահպանել սեփական մշակույթի ավանդական գծերը (օրինակ՝ աշխատանքային էթիկան) և միավորել այդ ամենը ժամանակակից տնտեսական ու գործնական միջավայրում<sup>12</sup>:

Մենք այսօր ապրում ենք համացանցի, համացանց-հեռուստատեսության, ռադիոյի, էլեկտրոնային փոստի և բազմաթիվ այլ տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման դարաշրջանում, երբ զգալիորեն մեծացել է դրանց ազդեցությունը հասարակության և հատկապես պատանիների ու երիտասարդության վրա: Ժամանակակից մշակույթի (մոդեռն) դիմակի տակ տեղի է ունենում էթնիկական և մշակութային առանձնահատկությունների «լվացում», և պատանիներին ու երիտասարդությանը հրամցվում են գաղափարներ, որոնք ոչ միայն օտար են մեր ազգային շահերին, հոգևորբարոյական արժեքներին, այլև լուրջ վտանգ են առողջ ապրելակերպին, առողջ մտածողությանը, ավանդական ընտանիքին<sup>13</sup>, ունեն ասպակառուցողական բնույթ, քարոզում են վարքի հակաօրինական մոդելներ, դաժանություն, բռնություն: Այդ քարոզչության հետևանքով պատանիների և երիտասար-

<sup>10</sup> Ֆ. Ֆուկույամա, Լիբերալիզմի այլընտրանքները, էջ 194:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 195:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>13</sup> Պատահական չէ, որ Սիոնի իմաստունները աշխարհը նվաճելու իրենց ծրագրում որպես նպատակ նշում են նաև քրիստոնեական ընտանիքի քայքայումը. «Պիտի քանդենք քրիստոնեական ընտանիքի կարեւորությունն ու անոր դաստիարակչական արժեքը...» (Սիոնի իմաստուններուն փրոթոքոլները, Եր., 2006, էջ 33):

դրության շրջանում կարող են ի հայտ գալ մի կողմից՝ սահմանայնություն, մյուս կողմից՝ անձնական կամ խմբային անհանդուրժողականություն և լարվածություն էթնիկական տարբեր մշակույթների ներկայացուցիչների հանդեպ: Սահմանայնություն ասելով նկատի ունենք ոչ միայն հասկացության էթնոհոգեբանական ըմբռնումը, այլև զուտ սոցիոլոգիական՝ սուբյեկտի սահմանային վիճակը սոցիալ-մշակութային ցանկացած խմբում, որը որոշակի ազդեցություն է թողնում նրա հոգեկանի վրա: Սոցիոլոգիայում այս հասկացությունը կիրառվում է՝ ընդգծելու համար մարդու չհարմարվելը սոցիալական նոր պայմաններին: Անհատական սահմանայնությունը բնորոշում է անձի ոչ լիովին ներգրավումը խմբի մեջ, որը նրան ամբողջությամբ չի ընդունում և դուրս է մղում որպես ուրացողի: «Անհատը նման իրավիճակներում հանդես է գալիս որպես «մշակութային խառնածին»», - ասում է ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Պարկը: Սահմանային սոցիալական են համարվում այն խմբերը, որոնք կազմված են հոգեբանությամբ և վարքով երկու կամ ավելի տարբեր մշակույթների ոլորտում հայտնված մարդկանցից, որոնք, սակայն, ամբողջությամբ դրանցից ոչ մեկին չեն պատկանում: Շանթը նմաններին բնութագրում է որպես «ջրի և ցամաքի վրա միաժամանակ ապրող երկկենցաղ էակների», ովքեր ոչ ջրի մեջ կարգին լողալ գիտեն, ոչ էլ ցամաքի վրա մարդավարի քայլել... Հասարակության սահմանայնացումը հանգեցնում է ազգային մշակույթից երիտասարդության կտրվածության, ազգային գիտակցության աղետալի անկման, որն էլ պատճառ է դառնում ազգային ինքնության կորստի...

«Տափարակ աշխարհի» հայեցակարգը ենթադրում է երկրների միջև առկա «չինական պարիսպների» ոչնչացում, այսինքն՝ երկրների ոչ միայն տնտեսական միավորում, այլև քաղաքական, իրավական և տեղեկատվական միասնական տարածության ստեղծում, որի բնորոշ գծերն են՝ 1) վերազգային կորպորացիաների հիմնում, որոնք ազգային են ըստ կապիտալի և միջազգային են ըստ տեղադրման, 2) համաշխարհային համակարգչային ցանցի ապահովում, որը հնարավորություն է տալիս անմիջապես հաղորդակցվելու ցանկացած օգտատիրոջ հետ աշխարհի ցանկացած կետում, համացանցային կոնֆերանսների կազմակերպում, խորհրդակցությունների անցկացում և այլն, ժամանցի և սպասարկման միջոցների օգտագործում, ապրանքների և ծառայությունների գովազդում, ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ կառավարությունների վրա ճնշման մեծացում, 3) զարգացած ենթակառուցվածքներով մեզապոլիսների ստեղծում, որոնք յուրահատուկ պետություններ են պետությունների մեջ. դրանք ոչ միայն գերբնակեցում, այլև հասարակության կտրուկ շերտավորում, ազգային ինքնագիտակցության կորուստ, հանցագործությունների և այլ բացասական երևույթների աճ են ենթադրում, 4) զանգվածային գիտակցության խաթարում, որն իրականացվում է վարքի կարծրատիպերի օգտագործմամբ, արժեհամակարգի նենգափոխմամբ, ուշադրության օբյեկտներից շեղման, հետևաբար՝ իրական ցանկություններին չհամապատասխանող միտումների դրսևորմամբ, 5) զանգվածային արվեստի քարոզչություն, վիրտուալ կեղծված իրականության առկայություն և այլն:

Այդ երևույթը դեռևս XX դարի կեսերին իսպանացի նշանավոր մտածողներից մեկը՝ Խոսե Օրտեգա-ի-Գասետը, բնութագրեց որպես «զանգվածի ըմբոստացում», համաձայն որի կայուն հասարակական կյանքին փոխարինելու է գալիս զանգվածային հասարակությունը, որտեղ բնակչության մեծ



մասը հետևում է զանգվածային միջոցների պարտադրած կարծրատիպերին, չափորոշիչներին, կրթերին, և թատերաբեմ է իջնում «զանգվածային մարդը» կամ «մարդ-զանգվածը», որն իրեն զգում է այնպես, ինչպես բոլորը, ուզում է ապրել այնպես, ինչպես բոլորը, չի ձգտում կատարելագործման, ազգային արժեքներին, անհատականության դրսևորման: Չանգվածային գիտակցության խաթարման հետևանքով մարդիկ կորցնում են ավանդական արժեքները, կտրվում են պատմական արմատներից, դառնում են մանկուրտ՝ պատմական հիշողությունը կորցրած էակ, հեշտությամբ կարող են ընկնել ազդեցության տակ՝ կանգնելով ծայրահեղականության և ահաբեկչության ճանապարհի վրա: Պատահական չէ, որ համաշխարհայնացման հետևանքներից մեկը եղավ ահաբեկչության աճը, որն իր բնույթով դարձավ միջազգային, ձեռք բերեց ֆինանսական լայն բազա՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները, ընդլայնելով գործունեության ծավալները:

Նման պայմաններում չափազանց կարևոր է պատանիների և երիտասարդների տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների համալիր ծրագրերի մշակումն ու իրականացումը՝ նպատակ ունենալով նրանց պաշտպանելու հոգևոր-բարոյական բնույթի բացասական ազդեցություններից, հարգանք և հպարտության զգացում սերմանելու ազգային արժեքների, սեր՝ հայրենիքի, հավատարմություն՝ անկախության գաղափարի հանդեպ: Եվ, այս առումով, գուցե կա անհրաժեշտություն օրինագիծ մշակելու «Անչափահասների առողջությանը և հոգևոր-բարոյական զարգացմանը սպառնացող և վնաս պատճառող տեղեկատվությունից պաշտպանելու մասին», ինչպես նաև որոշակի վերահսկողություն սահմանելու տարատեսակ դրամաշնորհների միջոցով հանրապետություն մտնող միլիոնավոր դուլարների վրա: Ի դեպ, նմանատիպ նախագծեր արդեն իսկ մշակվել են հետխորհրդային հանրապետություններում:

Պատանիների և երիտասարդների տեղեկատվության հիմնական աղբյուրը համացանցն է: Ըստ վիճակագրության՝ երիտասարդության 65%-ը դիմում է համացանցի օգնությանը ոչ թե ճանաչողական կամ մասնագիտական, այլ զուտ ժամանցի նպատակով: Այստեղ է, որ հիմնականում դրսևորվում է համացանցի բացասական կողմը: Այն ստեղծում է ծանոթությունների և միջանձային հարաբերությունների, ինչպես նաև բարեկամության և սիրո վիրտուալ լայն հնարավորություններ, որը գրեթե չի պահանջում պատասխանատվություն և նյութական ծախսեր: Ղա հանգեցնում է համացանցային տարաբնույթ կախվածության, հաղորդակից դարձնում այնպիսի բացասական երևույթների, ինչպիսիք են պոռնոգրաֆիան, թմրամոլությունը, աղանդավորությունը, իրական հերոսների փոխարեն որպես կատարելատիպ են ընդունվում մտացածին հերոսներ, հաճախ նաև հակահերոսներ՝ ձգտելով նմանվել նրանց: Իբրև հետևանք՝ մարդն աստիճանաբար կտրվում և օտարվում է հասարակությունից: Չդառնալով յուրային օտարների մեջ, դառնում է օտար յուրայինների մեջ: Օտարվում է նաև ազգային մշակույթից, դառնում է հետևորդը մի մշակույթի, որը ոչ մեկը իրենը չի համարում և չի ասում՝ «Սա իմ մշակույթն է»: Այսինքն՝ նա դառնում է կրողը մի մշակույթի, որը չունի սուբյեկտ, որի համար ոչ մեկը պատասխանատվություն չի կրում, այդ թվում նաև ինքը, որովհետև այդ մշակույթը իր մշակույթն էլ չէ, այդ պատճառով էլ կարող է լինել ցանկացած ձևի՝ անհոգի, ստոր, ցինիկ, չար, կործանարար... Հին Հռոմում ասում էին. «Յուրաքանչյուր սենատոր բարոյական է, սենատը՝

անբարո», որովհետև սենատորը պատասխանատու է իր գործողությունների համար: Նույնը կարելի է ասել մշակույթների վերաբերյալ. «Յուրաքանչյուր որոշակի ազգային մշակույթ բարոյական է, ոչ մեկին չպատկանող «համացանցային» մշակույթը՝ անբարո»: Եվ դա միանգամայն բնական է, որովհետև, եթե մշակույթը ոչ մեկին չէ, ուրեմն, ոչ մեկը պարտավորվածություն չունի դրա հանդեպ, և ոչ ոք չի ձգտում լավացնել, գեղեցկացնել, բարոյական դարձնել այն: Այդ մշակույթը վերածվում է խնդրահարույց իրավիճակների հանդեպ ձևավորված որոշակի հակադարձման և դադարում է կատարել իր հիմնական՝ սոցիալական գործառույթը, որն ապահովում է մշակույթի և հասարակության փոխազդեցության կարգավորումը, որի վրա հենվում են մշակույթի մյուս՝ միջավայրին հարմարվելու, ճանաչողական, տեղեկատվական, կարգավորող, արժևորող և այլ գործառույթներ, որոնք իմաստ են հաղորդում կյանքին և կեցությանը:

Ջբիգնև Բժեգինսկին իր աղմկահարույց «Մեծ շախմատի տախտակ» գրքում նշում է, որ ամերիկյան «զանգվածային մշակույթը» մագնիսական ձգողական ուժ ունի հատկապես աշխարհի երիտասարդության համար: Եվ երիտասարդությունն աստիճանաբար դառնում է այդ մշակույթի կրողը՝ հեռանալով իր ազգային լեզվից, մշակույթից, ավանդույթներից, արժատներից: Աստիճանաբար աճում է այն մարդկանց թիվը, ովքեր իրենց համարում են «աշխարհի քաղաքացիներ», իսկ հայրենի երկրի մշակույթը որակում են իբրև հետամնաց ու լճացած... Այսինքն՝ աստիճանաբար մեծանում է ազգային-մշակութային ինքնորոշումը կորցրած, անազգ-անհայրենիք մարդկանց թիվը, որը հանգեցնում է հասարակական համակարգի ապակայունացման, հասարակական լարվածության կտրուկ աճի, մի խոսքով՝ հարցականի տակ է առնվում այս կամ այն երկրի ինքնավարությունը և տարածքային ամբողջականությունը պահպանելու կարողությունը:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ XX դարավերջի տեղեկատվական հեղափոխությունը իրականություն դարձրեց միասնական փոխկապակցված և փոխհամաձայնեցված աշխարհի գաղափարը, որը, Ֆրիդմանի բնութագրմամբ, վերածվել է «տափարակ աշխարհի», իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բնութագրմամբ՝ «համաշխարհային գյուղի», որտեղ, շնորհիվ համակարգչայնացման, համացանցի, արբանյակային հաղորդակցման տեխնոլոգիաների, ինչպես նաև ժամանակակից փոխադրամիջոցների, միավորվել են բոլոր երկրների և տարածաշրջանների տնտեսությունը, գիտությունը և մշակույթը: Ստեղծվել է հաղորդակցական թափանցելիության, տեղեկատվական հոսքերին ազատ անցման իրավիճակ, որտեղ չկա ոչ մի սահման և առձակատման գիծ: Համացանցը ստեղծել է մի նոր՝ վիրտուալ իրականություն, ամենակուլ մի նոր կայսրություն՝ ամեն ինչ միօրինակացնելու, միասեռացնելու իր օրենքներով, իր նորմերով, բնականաբար, նաև իր մշակույթով ու արժեքային համակարգով, որը հիմնականում արևմտյան է՝ ուղղված *ոչ արևմտյան* բոլոր «մյուսների» և ենթադրում է արևմտյան ապրելակերպի, նորմերի, արժեքների, տնտեսական ու քաղաքական հաստատությունների և չափորոշիչների տարածում ամբողջ աշխարհում՝ որպես ժամանակի հրամայական:

Հաճախակի են դարձել դժգոհությունները, թե համաշխարհայնացումը, մշակույթների փոխհարստացման միջոց լինելու փոխարեն, գործնականում վերածվել է ազգային մշակույթների դիմազրկման ձևի, հաշվի չի առնում ազգային մշակույթների յուրահատկությունները, զրկում է վերջիններիս աշ-

խարհայացքային հենքից, և, պատահական չէ, որ այդ մշակույթները կորցնում են խորքայնությունը և ընկալվում են կամ որպես տարաշխարհիկություն (էկզոտիկա), կամ որպես անհետաքրքիրություն, կամ որպես «զվարճալի ֆոլկլոր»: Ղա, առաջին հերթին, պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մարդը ձգտում է հնարավորինս խուսափել կյանքը խնդրահարույց դարձնելուց՝ կապված նոր մշակույթի ձեռքբերման և յուրացման հետ: Ժամանակակից *արևմտյան մարդը* չի ցանկանում նոր հիմնախնդիրներ, նրա հիմնական սկզբունքն է՝ «no problem», նա ուզում է ապրել ու վայելել կյանքն իր ամբողջ շքեղությամբ. մշակում է վարքի և ապրելակերպի իր տիպոսիականները, այդ պատճառով էլ, ինչպես նկատում է Ա. Կոսիչենկոն, ազգային մշակույթների նույնիսկ լավագույն նմուշները համարում է «արտեֆակտների անհետաքրքիր խարհ»<sup>14</sup>: Մշակույթի համաշխարհայնացումը հանգեցրել է մի այնպիսի անհետաքրքիր փոփոխության, երբ ազգային մշակույթների համամարդկային կամ նոր արժեքների իրական նշանակության մասին խոսում են՝ ելնելով միայն արևմտյան արժեքային համակարգից, այսինքն՝ *արևմտյան մարդը* դարձել է ազգային մշակութային արժեքների միակ չափորոշիչը: Փաստորեն, մշակույթի համաշխարհայնացման առանցքը Արևմուտքն է՝ իր արժեհամակարգով:

Այս միտումը ազգային մշակույթների սուբյեկտների շրջանում հաճախ ձևավորում է համաշխարհային մշակութային զարգացումներից մեկուսանալու ձգտում, որը նույնքան վտանգավոր է, որքան առաջինը: Որովհետև «մեկուսացված» ազգային մշակույթի «արգելանոց» թափանցելով՝ արևմտյան զանգվածային ակտիվ մշակույթից շատ ժամանակ չի պահանջվի իր միանձնյա տիրապետությունն այնտեղ հաստատելու համար: Կոնստանդին Կոլինը իր հոդվածներից մեկում հասարակության համաշխարհայնացումը բնութագրում է որպես «հումանիտար նոր հեղափոխություն, որի հետևանքով բազմաթիվ ազգային և էթնիկական ավանդական մշակույթներ էական փոփոխություններ կկրեն, իսկ նրանց մի մասը ոչ միայն կարող է ձևախեղվել, այլև կործանվել ամբողջությամբ»<sup>15</sup>: Ղա կարող է վերաբերել նաև մեր ազգային մշակույթին:

ՄԱԿ-ի ընդունած «Երկրի խարտիայում», որը ցանկությունների մի ամբողջություն է, ասվում է, որ մարդկության կայուն զարգացման հիմքը տարբեր մշակույթների համակեցությունն ու համագործակցությունն է, որ «...մեր մշակութային բազմազանությունը արժեքավոր ժառանգություն է, և որ տարբեր մշակույթներ գտնում են կայուն ապրելակերպի իրենց տեսլականը իրականացնելու ճանապարհը»<sup>16</sup>: Համաշխարհայնացման նկատմամբ այս մոտեցումը լավատեսական է, և մարդկությունն, իսկապես, պետք է շարունակի մշակութային երկխոսությունը, քանի որ յուրաքանչյուր մշակութային սուբյեկտ շատ բան ունի սովորելու մյուսներից ճշմարտության, Գեղեցիկի և Բարու որոնման ճանապարհին: Այս իմաստով միանգամայն իրավացի է Ի. Վասիլենկոն, երբ գրում է. «Համընդհանրական աշխարհը պետք է ստեղծել քաղաքակրթությունների երկխոսության ընթացքում՝ որպես բազմանիստ

<sup>14</sup> St'u **Косиченко А.**, Национальные культуры в процессе глобализации // WWW.orda.kz. Электронный информационно-аналитический бюллетень, № 8, 9:

<sup>15</sup> **Колин К.**, Неоглобализм и национальная культура, www.URL.http://www.opos.sitc.ru/chronika/2004/11/neoglobalizm.doc.- 11.12.2004

<sup>16</sup> http://www.earthcharter.org/draft/charter.htm.

ոգեղենության ընդհանուր տարածություն, որը միշտ բաց է և անընդհատ կատարելագործվում է ուրիշին հասկանալուն գուզընթաց»<sup>17</sup>:

Համաշխարհայնացումը եթե մի կողմից՝ ենթադրում է սոցիալական աշխարհի «սեղմում», «փոքրացում», ապա մյուս կողմից՝ «ընդարձակում», «մեծացում» ոչ միայն գործունեության դաշտի, այլև գիտակցության, մշակույթների փոխհարաբերության, քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից: Եվ, բնական է, որ այս իրավիճակում մշակույթների քաղաքակրթական հակամարտությունը հաղթահարելու համար միանգամայն նոր փոխոփայություն է պահանջվում, կամ, ինչպես բնորոշում է Ն. Ֆեդոտովան, փոխըմբռնման փոխոփայություն է անհրաժեշտ<sup>18</sup>: Հետևաբար՝ «տափարակ աշխարհի» ձևավորումը պետք է օժանդակի տարբեր մշակույթների փոխհարստացման և փոխլրացման գործընթացին, այլ ոչ թե սպառնալիք դառնա դրանց գոյությանը և ազգային ինքնության պահպանմանը: Մինչդեռ, մի բան է ցանկությունը, միանգամայն այլ բան՝ իրականությունը, որը «ոչ թե տանում է դեպի մշակույթների և քաղաքակրթությունների փոխհարստացում և փոխլրացում, այլ դեպի քաղաքակրթությունների բախում» (Ս. Հանթինգթոն): Այս դեպքում հատկապես կարևոր է փոքր ազգերի քաղաքակրթական և մշակութային ճիշտ կողմնորոշումը, դիմակայության համարժեք մարտավարության և ռազմավարության մշակումն ու կիրառումը:

Մեր ազգային մշակույթի, ավանդույթների, եկեղեցու և պետականության դեմ ուղղված հոգևոր և քաղաքական նվաճման (ագրեսիա) հանդեպ մտահոգությունը թելադրում է գործողությունների համալիր ծրագիր: Այդ ծրագրի առաջնահերթություններ պետք է համարվեն՝

- Հայոց լեզվի՝ որպես հայ ազգի լեզվամտածողության հենքի և ՀՀ պետական լեզվի դերի բարձրացումը:

- Ազգային ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, վերարտադրության և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

- Հետևողական և խոհեմ պայքարն աղանդավորության դեմ:

- Գիտելիքահենք հասարակության, արդյունաբերական հզորությունների վերականգնման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև գիտության ոլորտում իրականացվող փոփոխությունների ճանապարհով «ուղեղների արտահոսքի» կանխումը՝ հատկապես երիտասարդների շրջանում:

- Օժանդակությունը ռազմավարական ուղղություն հայտարարված հայագիտության բնագավառի զարգացմանը:

- Որպես պատասխան տարածաշրջանային տերությունների և հարևան պետությունների աշխարհաքաղաքական հատուկ նպատակներ հետապնդող ծրագրերի, որոնք ուղղված են հայ ժողովրդի պատմության և մշակույթի խեղաթյուրմանը, Հայաստանի և հայ ժողովրդի մասին ոչ նպաստավոր պատկերացում ստեղծելուն, անհրաժեշտ է ընդլայնել մեր երկրին ու ժողովրդին վերաբերող օտար սկզբնաղբյուրների հայերեն, ինչպես և հայոց գիտամշակութային կարևորագույն արժեքների օտարալեզու թարգմանությունն ու հրատարակությունը, մի կողմից՝ հայ ժողովրդի իրական պատմությունը,

<sup>17</sup> **Василенко И.**, Диалог цивилизаций. М.: Эдиториал УРСС, 1999, с. 18.

<sup>18</sup> Տե՛ս **Федотова Н.**, Возможна ли мировая культура? // „Философские науки“, 2000, №4, էջ 58-68:

նրա մշակույթի քաղաքակրթական արժեքը համաշխարհային հանրույթին ներկայացնելու, իսկ մյուս կողմից՝ հնարավոր ազգային թերարժեքության զգացումը վերացնելու և հայ լինելու համար հպարտություն ապրելու հոգեբանության ձևավորման ծրագրի իրականացումը, որը դեռևս տասնութերորդ դարում իր առջև դրել էր Սխիթարյան միաբանությունը և, պետք է արձանագրել, պատվով կատարեց:

- Մշակութային համաշխարհայնացումը թուլացնում է ազգային լեզուների դիրքերը՝ փոխարենը ապահովելով միջմշակութային փոխհարաբերություններում հաստատված անգլերենի տարածումը: Այս հարաբերակցության մեջ հայերենի գործառնական անհրաժեշտությունը հիմնավորելու նպատակով հարկ է համարժեք թարգմանություններով աշխարհին ներկայացնել մեր գրականության գոհարները՝ արժանին մատուցելով դրանց հեղինակներին: Հակառակ դեպքում հայ հոգևոր մշակույթի հսկայական հարստությունը կմնա եզակի գիտնականների ուսումնասիրության նյութ, ինչպես ուրարտական կամ շումերական սեպագրերը... 1913 թ. Նոբելյան մրցանակի ներկայացված Սիամանթոն չարժանացավ այդ պարգևին միայն այն հիմնավորմամբ, որ ծանոթ չէր արևմտյան լայն զանգվածներին՝ թարգմանված չլինելու պատճառով: Նշված մրցանակին արժանացավ հնդիկ գրող Ռաբինդրանաթ Թագորը (1861–1941), որի բանաստեղծությունների անգլերեն թարգմանություններն արևմուտքում համեմատաբար լայն տարածում էին ստացել և դիտարկվում էին որպես հոգևոր գրականություն՝ ստեղծելով Թագոր-մարգարեի կերպարը:

Աշխարհի նոր գիտական պատկերը, գիտության և տեխնոլոգիաների ժամանակակից զարգացումներն առաջադրում են նոր մարտահրավերներ և պահանջում նոր լուծումներ: Եթե վաղ միջնադարն առաջարկում էր «մեկուսացում»՝ ազգային ինքնությունը պահպանելու նպատակով, որի արդյունքում ընդունվեց քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, իսկ հետագայում՝ քրիստոնեության հակաքաղկեդոնական տարբերակը, դրան հաջորդող ամբողջ պատմությունը՝ ի դեմս հայկական քրիստոնեության, մեր ազգային ինքնությունը պահպանելու համար մղված պայքարի պատմություն էր, որտեղ առաջին պլան էր մղվում *թշնամու* կերպարը՝ իր տարբեր դրսևորումներով, այսօր հրամայական է դարձել *բարեկամի*, մշակութային և քաղաքակրթական դաշնակցի որոնումն առաջին հերթին տարածաշրջանում, իսկ իրականություն դարձած «տափարակ աշխարհի» պայմաններում՝ նաև ոչ անմիջական հարևանների մեջ: Դա ենթադրում է պատմության վերափնաստավորում՝ նորովի գնահատելով անցյալի իրադարձությունները, կոտրելով ձևավորված կարծրատիպերը...

**ЮРИЙ ОВАКАНЯН**

Доцент кафедры „Философии и истории  
армянского народа” АГЭУ,  
кандидат философских наук

*Концепция “плоского мира” и проблема национального суверенитета.*– Сегодня одной из самых обсуждаемых тем является вопрос о глобализации, как процесса интеграции мировой экономики, политики и культуры и в этом контексте – вопрос о национальной безопасности. В связи с беспрецедентным прогрессом современных информационных и коммуникационных технологий прежний “Большой” мир уменьшился, и стал “Маленьким”, преобразился в “плоскую игровую площадку”. Мир стал “плоским”, что означает, что на пути глобализации исчезают не только географические барьеры, но и национальные, культурные границы различных государств. В таких условиях увеличился не только риск потери национальной экономики, но и национальной культуры, возрос даже риск потери национального суверенитета. В статье рассматривается вопрос о том как можно бороться с этими угрозами и обеспечить культурную и национальную безопасность.

**YURI HOVAKANYAN**

Associate Professor at the Chair of „Philosophy and  
Armenian History” at ASUE, PhD in Philosophical Sciences

*The Concept of the “Flat World” and the Problem of National Sovereignty.*– Today the most discussed topic is the problem of globalization, as an integration process in the global economy, politics and culture, and in that context, the issue of national security. Thanks to unprecedented progress of the modern information and communication technologies, once “Big” world has been reduced to “Tiny” and has become a “flat playing field”. The world has become “flat”, as, due to globalization there are no geographical barriers, as well as different cultures and national boundaries. In such conditions there is a threat to lose the national economy, as well as culture, even national sovereignty. The article discusses the issue of dealing with these threats and providing cultural and national security.